



«17» ապրիլի 2026թ.

No ՀՀՏՄ-ՄԱԾԶԲ-26/12

Պետ. լիցենզիա No 17157

Նախագծող՝ «ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. Դովհաննիսյանին

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

ՀՀ Տավուշի մարզի Լուսաձորի կրթահամալիր տանող 0.45կմ երկարությամբ համայնքային նշանակության ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի Լուսաձորի կրթահամալիր տանող 0.45կմ երկարությամբ համայնքային նշանակության ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է՝ 85162,80 ՀՀ դրամ ներառյալ Ա.Ա.Հ:

(փորձաքննության եզրակացությունն առդիր 3 էջ):

«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ տնօրեն՝



Ե. Ասատրյան

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության և ներկայացվել նախագիծ կազմված 2 ավտոմիջ

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Ճարտարապետաշինարարական մաս

Սույն նախագծով նախատեսված է ՀՀ Տավուշի մարզի Լեռնաձոր բնակավայրի կրթահամալիր տանող համայնքային նշանակության ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի նախագիծը: Նախագիծը կազմվել է ըստ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և N ՀՀՏԱ-ՔՄԽԵԶԲ-25/03 պայմանագրի կնքված «ԻՆՖՐԱ ԴԻՉԱՅՆ» ՍՊԸ կողմից: Նախագծային փաստաթղթեր կազմելիս օգտագործվել են ՀՀ-ում գործող նորմատիվ-իրավական ակտերը, ՀՀԸՆ-երը և ԳՕՍ-երը:

Վերակազմվող տեղամասը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում: Ներկայացված տեղամասի հետախուզական աշխատանքները իրականացվել են 2025թ.-ի նոյեմբեր ամսին: Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF02-ARMWGS), բարձունքային համակարգը՝ Բաթիան 1977թ.: Հորիզոնականների անկյունը՝ 1.0մ:

Գոյություն ունեցող ճանապարհի նկարագրությունը

Լեռնաձոր բնակավայրի կրթահամալիր տանող փողոցի հողային պատահող և ճանապարհային պատվածքը գտնվում են ոչ բավարար վիճակում:

Երթևեկային մասի պատվածքը բացակայում է, առկա են բազմաթիվ փոսեր, երթևեկելի մասի լայնքերը տարբեր են բոլոր հատվածներում: Լայնական թեքությունը չի համապատասխանում նորմերի պահանջներին, գոյություն ունեցող ջրահեռացման համակարգերը բացակայում են:

Մայրերը և եզրաքարերը գտնվում են մասամբ քայքայված վիճակում կամ լրիվ բացակայում են: Երթևեկության կազմակերպման ու անվտանգության տարրեր բացակայում են, բացակայում է նաև գծանշումը:

2. Տեխնիկական պայմանները

Նախագծային աշխատանքները կատարելուց ղեկավարվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամաններով հաստատված 12.12.2022թ N28-Ն ՀՀԸՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», 08.07.2022թ N16-Ն ՀՀԸՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ», 21.06.2022թ N12-Ն ՀՀԸՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերով և 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայրերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N105-Ն հրամանով, ինչպես նաև ՀՀԸՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀԸՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն», ՀՀԸՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», ՀՀԸՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» շինարարական նորմերով: Նախագիծը կատարվել է AutoCad և Civil3D համակարգչային ծրագրերով:

Նախագծային աշխատանքներն իրականացվել են համաձայն գործող նորմերի և տիպային նախագծերի՝ պահպանելով գոյություն ունեցող ճանապարհի պարամետրերը: Նախագծում ընդունված են ա/6 պարամետրերը(ըստ առաջադրանքի):

Հիմնվելով գեոդեզիական ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա՝ նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները՝

- Ճանապարհային պատվածքի քանդում:
- Ճանապարհային հագուստի կառուցում:
- Մայրթի կառուցում
- Հենապատերի կառուցում
- Մետաղական ցանկապատի կառուցում
- Ճանապարհի կահավորում (իջատեղեր, ճանապարհային նշաններ և գծանշում):

3. Հատակագիծ և երկայնական կտրվածք

Նախագծվող ճանապարհների հատակագիծը և երկայնական պրոֆիլը համարյա փոփոխության չեն ենթարկվել, փոփոխվել է որոշ հատվածներում ջրահեռացման ավելի արդյունավետ կազմակերպման համար:

Նախագծվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 0.494կմ:

Ճանապարհի հատակագիծը անցնում է գոյություն ունեցող ճանապարհով:

Հատակագծում շրջադարձի անկյունները նշահարված են շրջանային կորերով:

Հատակագծում տեղամասը ունի հետևյալ ցուցանիշները.

- Տեղամասի երկարությունը՝ 494գծ.մ
- Շրջադարձի անկյունների քանակը 17 հատ.

Շրջադարձի անկյունների շառավիղը տատանվում են 9.0-5000մ:

Ոլորոյնության գործակիցը -0.16

Երկայնական կտրվածքը կազմված է տեղանքի բարձրության պայմանական նիշերով:



Երկայնական կտրվածքում էական փոփոխություն չի կատարվել:
Երկայնական կտրվածքում առավելագույն թեքությունը կազմում է 94.0%, իսկ մինիմումը՝ 25%:

Հողային պատտան

Նախագծում ընդունված հողային պատտանի կոնստրուկցիան և տիպերը բավարարում են գործող տեխնիկական նորմերին և պայմաններին:

Տեղանքի ռելիեֆի պայմաններից և քնսիողների քնութագրից ելնելով՝ հողային պատտանի կայունությունը հնարավոր է ապահովել կառուցման կանոնների ու ջրահեռացման պահանջների պահպանման դեպքում:

- Հողային պատտանի լայնությունը՝ 5.0-8.0մ

- Երթևեկային մասի լայնությունը՝ 4.0-6.5մ

- Մայթերի լայնությունը՝ 0.75-2.8մ

- Կողնակները՝ 1.0մ

Երթևեկելի մասի լայնական թեքությունը ընդունված է միաթեք՝ 15%՝ ԿՄ0+000-ԿՄ0+140, իսկ ԿՄ0+140-ԿՄ0+494՝

երկկողմանի 15% , մայթերինը՝ 15%:

Հողային պատտանի մաքրումից և վերականգնումից հետո հողային աշխատանքների ծավալը կազմում է.

- Հանույթը - 1062.3 մ3

- Լիցք - 14.8 մ3

Կառուցման աշխատանքների տեղերը և ծավալները բերված են համապատասխան գծագրերում և ամփոփագրերում:

5. Մայթեր

Հետիոտնի անվտանգության համար նախատեսվում է նորոգել և կառուցել նոր մայթեր:

Աջակողմյան նոր մայթի լայնությունը 1.2մ:

- 30մմ Բ տիպի II մակնիշի խիտ մանրահատիկ ասֆալտբետոն, h=3սմ, ГОСТ 9128-2013 Աղյուսակ 3 – 475.0մ2,

- Հատիկավոր ենթահիմք (Ավազակոպճային շերտ), h=12սմ, ГОСТ 23735-14, Դրյոռա Ж17 - 475.0մ2, եզրաքարերը

- Բազալտե 15x30սմ չափի եզրաքար ГОСТ 32018-2012 - 399.6գծ.մ

- Բետոնե 10x20սմ չափի միաձույլ В15 բետոնե եզրաշար ГОСТ 26633-2015 - 126.8գծ.մ

- Բետոնե 20x60սմ չափի միաձույլ В15 բետոնե եզրաշար ГОСТ 26633-2015 - 35.0գծ.մ

Մայթերի ընդհանուր մակերեսը կազմում է 475.0մ2:

Մայթերում նախատեսված են թեքահարթակները մուտքերի մոտ, ըստ անհրաժեշտության: Թեքահարթակի չափերն ու ձևը կարող են փոփոխվել իրավիճակից ելնել, ինչպես նաև պատվիրատուի ցանկության դեպքում: Ընդհանուր նախատեսված է կառուցել 12հատ թեքահարթակ, քանակը նույնպես կարող է փոխվել, շինարարության ժամանակ պատվիրատուի պահանջով:

Աշխատանքների տեղերը և ծավալները բերված են համապատասխան գծագրերում և ամփոփագրերում:

6. Իջատեղեր և մուտքեր

Հիմնանորոգվող ճանապարհը հատում է բազմաթիվ իջատեղեր, ինչպես նաև քնակավայրում մուտքեր և փողոցներ:

Հատող իջատեղերում և մուտքերում նախատեսված է իրականացնել պատվածք 4.0-13.0գծ.մ երկարություններով:

Իջատեղերում և մուտքերում ճանապարհային պատվածքը նախատեսված է իրականացնել հետևյալ կառուցվածքով.

- Հատիկավոր ենթահիմք (Ավազակոպճային շերտ), ГОСТ 23735-14, Դրյոռա Ж17 - h=10սմ

- Չափազատված խճային հիմք (բիտումի տարածումով 4.12տ/1000մ2/), ՀՀՇՆ 32-01-2022 և СБОРНИК 27, - h=12սմ

- Բ տիպի II մակնիշի խիտ մանրահատիկ ա/բ ГОСТ 9128-2013 Աղյուսակ 3, - h=4սմ

Իջատեղերի և մուտքերի պատվածքի ընդհանուր մակերեսը կազմում է 554.6մ2:

Անհրաժեշտ աշխատանքների ծավալները ներկայացված են համապատասխան ամփոփագրերում:

7. Ճանապարհային պատվածք

Ճանապարհային հագուստի վերակառուցման համար նախատեսված իրականացնել մեկ տիպով, հետևյալ կառուցվածքով.

- I շերտ, Բ տիպի II մակնիշի խիտ մանրահատիկ ա/բ h=5սմ, մ2, ГОСТ 9128-2013 Աղյուսակ 3

- II շերտ, Չափազատված խճային հիմք (բիտումի տարածումով 4.12տ/1000մ2/), h=15սմ, մ2, ГОСТ 9128-2013 Աղյուսակ 3,

- III շերտ, Հատիկավոր ենթահիմք (Ավազակոպճային շերտ), h=10սմ, մ2, ГОСТ 23735-14, Դրյոռա Ж17

Ճանապարհային պատվածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2722.6մ2:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Շինէքսպրտ» ՍՊԸ-ն նշում է, որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:



3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամգակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից «Շինէքսպորտ» ՍՊԸ-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և

ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ

Գլխավոր ինժեներ՝

Փորձագետ՝



Ա. Զալյան

Գ. Գուլա